600.0427.14.11.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2018 թվականի №427Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի հունվարի 16-ի №2Ա, №3Ա և փետրվարի 13-ի №30Ա որոշումներով «ՕԼԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել են ռադիոհաճախականությունների օգտագործման համապատասխանաբար №1027, №1028 և №1033 թույլտվությունները (այսուհետ՝ թույլտվություններ), իսկ 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №361Ա որոշմամբ՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի №1061 լիցենզիան (այսուհետ՝ լիցենզիա),

բ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը և չի վճարել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ մասի 9.1.1.4 կետով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար սահմանված տարեկան պետական տուրքերը և դրանք ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները,

գ) Հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 11-ի №188Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է 2013 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականությունների օգտագործման

պարտադիր վճարների մասով հաշվարկված 1 365 612 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր տասներկու) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, սակայն փոխանցել է 522 720 (հինգ հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր քսան) դրամ,

դ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 16-ի №312Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է լիցենզիայի գծով տարեկան պետական տուրքի մասով հաշվարկված 437 100 (չորս հարյուր երեսունյոթ հազար հարյուր) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ե) Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի մարտի 31-ի վճռով Ընկերությունը սնանկ է ճանաչվել, և նույն դատարանի 2017 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ,

զ) Ընկերության սնանկության գործով կառավարիչը 2018 թվականի հոկտեմբերի 31-ին գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ Ընկերությանը տրամադրված լիցենզիան և թույլտվություններն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

է) Ընկերության՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը 2014 թվականի հունիսի 12-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կազմել է 6 400 942 (վեց միլիոն չորս հարյուր հազար ինը հարյուր քառասուներկու) դրամ, իսկ լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար սահմանված տարեկան պետական տուրքի պարտավորությունը՝ 2016 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար 120 400 (հարյուր քսան հազար չորս հարյուր) դրամ,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝

   1) 2013 թվականի հունվարի 16-ի «ՕԼԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №2Ա որոշումը,

   2) 2013 թվականի հունվարի 16-ի «ՕԼԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №3Ա որոշումը,

   3) 2013 թվականի փետրվարի 13-ի «ՕԼԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №30Ա որոշումը,

   4) 2013 թվականի հոկտեմբերի 23-ի «ՕԼԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա տրամադրելու մասին» №361Ա որոշումը:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի մասով 2014 թվականի հունիսի 12-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 31-ը հաշվարկված պարտքը կազմում է 6 400 942 (վեց միլիոն չորս հարյուր հազար ինը հարյուր քառասուներկու) դրամ, իսկ լիցենզիայի գծով տարեկան պետական տուրքի մասով 2016 թվականի նոյեմբերի 16-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 31-ը հաշվարկված պարտքը՝ 120 400 (հարյուր քսան հազար չորս հարյուր) դրամ:

3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.

   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
14 նոյեմբերի 2018թ.